



Ընդունված է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի  
ռեկտորի 2019 թվականի հունվարի 16-ի թիվ 01-Մ հրամանով

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ  
ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական  
համալսարան» հիմնադրամի կանոնադրության 46-րդ կետի 20-րդ ենթակետը,

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական  
համալսարան» հիմնադրամի կառուցվածքում գործող բուժհաստատությունների  
բուժաշխատողների էթիկայի կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով հաստատված էթիկայի կանոնների  
խախտման համար բուժաշխատողների նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ  
սահմանված կարգով կիրառվում են կարգապահական պատասխանատվության  
միջոցներ, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ պատասխանատվություն սահմանված չէ:

ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

## **ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ**

### **«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ**

1. Պացիենտ-բուժաշխատող հարաբերություններում «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կառուցվածքում գործող բուժհաստատությունների բուժաշխատողը (այսուհետ՝ բուժաշխատող) պարտավոր է.
  - 1) հարգել պացիենտի պատիվն ու արժանապատվությունը, առաջնորդվել պացիենտի լավագույն շահերով, ցուցաբերել հոգատար վերաբերմունք նրա նկատմամբ,
  - 2) հարգել պացիենտի՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու կամ այն մերժելու իրավունքը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,
  - 3) բացառել պացիենտի նկատմամբ անձնական վերաբերմունքի ազդեցությունը մասնագիտական գնահատական ձևավորելիս կամ մասնագիտական գործունեություն իրականացնելիս,
  - 3) բացառել պացիենտին բժշկական նշանակության ապրանքների և դեղերի նշանակումը կամ նրան դեպի գործընկեր բուժաշխատողներին ուղղորդումը՝ անձնական շահ կամ օգուտ ստանալու նկատառումներով,
  - 4) բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս առաջնորդվել մասնագիտական և մարդասիրական սկզբունքներով, բացառել պացիենտի նկատմամբ անհավասար, կողմնակալ կամ ուղղորդված վերաբերմունքը կամ գործողությունների իրականացումը,

6) մասնագիտական գործունեության մեջ հաստատել միայն այն, ինչն իր կողմից անձնապես ստուգվել կամ ուսումնասիրվել է,

7) հոգեկան խանգարումներ ունեցող պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս այդ վիճակով պայմանավորված բժշկական օգնության և սպասարկման անհետաձգելի անհրաժեշտության առաջացման դեպքում միջոցներ ձեռք առնել (տեղեկացնել, հայտնել) պացիենտին համապատասխան բժշկական օգնության և սպասարկման տրամադրումն ապահովելու (կազմակերպելու) համար,

8) բացառել պացիենտին բժշկական օգնության և սպասարկման տրամադրման մերժումը՝ վարակիչ հիվանդությամբ տառապելու հիմքով, եթե նման արգելք ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ,

9) պացիենտի (օրինական ներկայացուցչի) համար առավել նվազ հոգեբանական բացասական ազդեցություն ունեցող եղանակով տեղեկացնել իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին, բացառությամբ այն դեպքերի երբ պացիենտը գրավոր հրաժարվում է այդ տվյալներին տեղեկացվելուց,

10) պացիենտին տրամադրել բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված չափորոշիչներով, գործելակարգերով նախատեսված ծավալը: Այն դեպքերում, երբ պացիենտին անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկման ծավալը դուրս է իր իրավասության շրջանակներից, ապա բուժաշխատողը պարտավոր է ուղղորդել այն բուժաշխատողին, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու է տրամադրել համապատասխան բժշկական օգնություն և սպասարկումը: Սույն ենթակետի շրջանակներում ուղղորդում է հանդիսանում ոչ թե անհատապես որոշված բուժաշխատողի վերաբերյալ անձնական տվյալների տրամադրումը, այլ անհատապես չորոշված բուժաշխատողի՝ համապատասխան մասնագիտացման վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը,

11) պահպանել բժշկական գաղտնի տեղեկությունները, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

12) անձնական բնույթի դիտարկվող հարաբերություններ չհաստատել իր պացիենտի հետ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու ողջ ժամանակահատվածում,

13) յուրաքանչյուր մարդու ցուցաբերել անհետաձգելի առաջին բժշկական օգնություն.

2.Բուժաշխատող-բուժաշխատող հարաբերություններում բուժաշխատողը պարտավոր է.

1) հարգել այլ բուժաշխատողների իրավունքները և օրինական շահերը,

2) պացիենտներ ներգրավելու նպատակով չթերագնահատել կամ որևէ այլ կերպ բացասական գնահատականներ չտալ իր գործընկեր բուժաշխատողների վերաբերյալ,

3)պացիենտի բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպելիս անհրաժեշտության դեպքում համագործակցել այն բուժաշխատողի հետ, ով ներգրավված է տվյալ պացիենտի բժշկական օգնության և սպասարկման տրամադրման գործընթացում,

4) զգուշացնել սույն էթիկայի կանոնները խախտող գործընկերոջը՝ խախտման փաստի վերաբերյալ: